24.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 24-ի N 2146 - Լ որոշման

ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է՝ Ամանորի կապակցությամբ սոցիալական աջակցություն տրամադրել 2015 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված՝ 2020 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ Արցախում հաշվառված երեխաներին:

2. Սույն միջոցառման շահառու է հանդիսանում 2015 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված՝ 2020 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ Արցախում հաշվառված երեխան (այսուհետ՝ շահառու):

3. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական աջակցության ձևով՝ յուրաքանչյուր երեխայի համար 20000 դրամի չափով:

4. Սոցիալական աջակցությունը նշանակում և վճարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացված տվյալների հիման վրա:

5. Սոցիալական աջակցությունը վճարվում է շահառուի ծնողին (խնամակալին):

6. Ծառայությունը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից շահառուների ցանկն ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է վճարման վճարման ցուցակ և այն էլեկտրոնային եղանակով տրամադրում է Հայփոստին:

7. Վճարման ցուցակում ներառվում են երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, մայրանունը (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան ու համարը և վճարման ենթակա գումարը:

8. Միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է Հայփոստի և Արցախփոստի միջոցով:

9. Միանվագ դրամական աջակցությունը վճարվում է սույն հավելվածի 7-րդ կետում նշված՝ վճարման ցուցակ ներառված երեխայի ծնողին (խնամակալին), ով Հայփոստի կամ Արցախփոստի աշխատակցին կներկայացնի երեխայի՝ սույն հավելվածի 7-րդ կետում նշված անձը հաստատող փաստաթուղթը, խնամակալի դեպքում՝ նաև երեխայի նկատմամբ խնամակալություն սահմանելու (խնամակալ ճանաչելու) մասին

փաստաթուղթը: Երեխայի ծնող (խնամակալ) լինելը հավաստվում է երեխայի՝ վճարման ցուցակ ներառված տվյալներով և ծնողի (խնամակալի) անձը հաստատող փաստաթղթով:

Ընդ որում, երեխայի ծնողի վերաբերյալ տվյալները համեմատվում են (համադրվում են) երեխայի ծննդյան վկայականում նշված՝ ծնողի վերաբերյալ տվյալների հետ: Վճարումն իրականացվում է ծնողի վերաբերյալ տվյալները համապատասխանելու (համընկնելու) դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ համընկնում են երեխայի մոր անձը հաստատող փաստաթղթում և երեխայի ծննդյան վկայականում նշված՝ մոր անունը, առկայության դեպքում՝ հայրանունը (չի համընկնում միայն ազգանունը), իսկ երեխայի ծննդյան վկայականում համընկնում են երեխայի հոր և մոր ազգանունները:

10. Միանվագ դրամական աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել և ենթակա չէ ժառանգման:

11. Եթե մինչև 2021 թվականի փետրվարի 1-ը միանվագ դրամական աջակցությունը չի վճարվում, ապա Հայփոստը կամ Արցախփոստը փոխանցված գումարը մինչև 2021 թվականի փետրվարի 15-ը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ծառայությանը տրամադրելով այն շահառուների տվյալները, ում միանվագ դրամական աջակցությունը չի վճարվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ